Մանրություն.— Առաջին տողը ծանծաղ գրված լինելու պատճառով երկրորդ անգամ էլ են փորագրել նույնը։

Նկ. 65. Արձ. № 99։

VII ՁԱՆԳԱԿԱՏՈՒՆ

101. Ձանգակատան ամ պատին դրսից

Հ ՁԿԹ Մ 1520

Հրատարակված է՝ Ձալ 32, Ղրիմ 65, Վիմ 176

1 Թվ. ՁԿԹ։
2 Կամաւն Այ, ես՝ պր Աղէս շինե-
3 ցի զՁաղացն Անկիպճկի, ամի
4 վախմ սբ Ածածնիս յիշատ(ա)կ հոգո
5 իմոյ։ Ես՝ Դաւիթ աբեղայս, թոռն պր Աղին,
6 որդի պր Սօլաղին յետոյ Նորոգեցի զՁա-
7 ղացն յիշատակ հոգո իմոյ եւ ծն-
8 աւղաց իմոց. ամէն։ Առաջնորդութիր
9 Ղուկաս արհեպին։

Մանրություն.— 1. Արձանագրությունը գրված է 1520 թվականին, Դավիթ աբեղայի ժամանակ, երբ նորոգվել է ջրաղացը և ոչ թե նրա պապ պարոն Աղի ժամանակ, երբ ջրաղացը շինվել և նվիրաբերվել է վանքին։

2. Ջրաղացի Անկիպճկի անունը կարելի է կարդալ նաև Անկապճկի Կ-ի հետ, փակագրված գրի ելուստը կարող է Ա-ի մասը լինել և ոչ թե Ի-ի։

102. Ձանգակատան ներսում, ճիր խորանի մուտքի ճակատին

ԺԳ դար

Հրատարակված է՝ Հար 302

1 Կամաւն Այ ես՝ Սաթս, որդի Արտաւազա աւրհնեց-
2 ի զեկեղեցիքս զանկակատանս, որ շինել էր արեն մ-
3 երձաւոր Վագն իմ, որդի Աբասա։ Եւ միաբանքս հաստատեցին ամեն էկեղեցիս
4 ինձ պատ(արագ)։

Մանրություն.— Վագնը Աբասի որդու անձնանունն է, որ շինել է զանգակատունը, իսկ Սաթը, որ զանգակատունն է օրհնել, չի գրած, թե եկեղեցական ինչ կոչում է ունեցել։ Մերձաւոր Վագն իմ որդի Աբասա, պետք է կարդալ մերձաւորն իմ Վագն, որդի Աբասա։ Հավանաբար նույն բովանդակությունն է ունեցել նաև զանգակատան մեջ ներկով գրված № 104 արձանագրությունը, որ խիստ կերպով եղծվել է։

Տարբերություններ.— 1. Հար Սաթս անձնանունը կարդացել է Աթս։